

**ՀԱՅ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ»
ԷՋԵՐՈՒՄ (1920 Թ.)^{*}**

ՄԱՐԻԱՄ ՀՈՎԱՍԵՓՅԱՆ

Քանալի բառեր՝ կոնֆլիկտ, Հայ-թուրքական պատերազմ, ռազմական գործողություններ, պարություն, բանակցություններ, հաշտության պայմանագիր, օբյեկտիվ վերլուծություն:

Կ. Պոլսի «Ճակատամարտ» հայկական օրաթերթի էջերում ոչ միայն ամփոփված է Հայ-թուրքական պատերազմի ողջ ընթացքը, այլև հատկապես կարևոր փաստաթղթերի փյազրության միջոցով ներկայացված են դրա ծագման ու Հայաստանի կրած պարության պատճառներն ու հետևանքները: «Ճակատամարտ» չի սահմանափակվել միայն լուրեր կամ թղթակցություններ փոխանակելով: «Հայ և թուրքական պատերազմ» խորագրի ներքո, լրաքաղին զուգընթաց, ներկայացրել է նաև վերլուծական հոդվածներ: Դրանք աչքի են ընկնում իրենց իրադատությամբ և անաչտ վերլուծությամբ:

Ներածություն

Հայ-թուրքական պատերազմի գույժը «Ճակատամարտ» օրաթերթը տպագրել է 1920 թվականի հոկտեմբերի 8-ի համարի ճակատային հատվածում¹: «Յարձա-

^{*} Հոդվածը ներկայացվել է 25.06.2020: Գրախոսվել է՝ 07.08.2020:

¹ Պարբերականը 15-20 օր ուշացումով էր Հայաստանի Առաջին Հանրապետությունից տեղեկատվություն ստանում: Դա էր պատճառը, որ Հայ-թուրքական պատերազմի մասին լուրն ուշացումով էր տպագրել: Մ. Հ.:

կումներ Հայաստանի դէմ. - Սարըգամըջի եւ Կաղզուանի մէջ թուրքերը ետ մղուած են»², - տեղեկացնում էր պարբերականը: Լուրը վերցված էր հոկտեմբերի 5-ին Հայաստանից խմբագրությանն ուղարկված հեռագրից, որտեղ նշված էր նաև հայոց զորքի բարոյական բարձր կորույթի և թուրքական կողմի ծանր կորուստների մասին³: Թերթի ձեռք բերած մասնավոր տեղեկությունների համաձայն⁴ հայկական բանակն ամեհի թափով էր ետ մղում թշնամու գրոհները, իսկ կանոնավոր բանակին օրեցօր միացող հայ կամավորական խմբերը հրաշքներ էին գործում⁵: «Եթէ Թուրքիոյ կողմէն անօթիներու և բորենիներու վրիճակ մըն է, որ կը յարձակի, Հայաստանի կողմէն անկախութեան և ազատութեան հուրքով բազմապատկուած կորիւններ են, որ կը խոյանան, գրոհ կու տան մինչեւ անգամ թնդանօթներու վրայ: Այդպիսի ուժ մը անպարտելի կը մնայ, ինչպէս մնաց մինչեւ այսօր»⁵, - կարդում ենք «Թուրք հարձակողականը» վերնագրով խմբագրականում:

«Ճակատամարտը» չի սահմանափակվել միայն լուրեր կամ թղթակցություններ տպագրելով հայ-թուրքական կռիվի վերաբերյալ: «Հայ և թուրք պատերազմ» խորագրի ներքո ամեն օր, լրաքաղիին զուգընթաց, ներկայացրել է նաև վերլուծական հոդվածներ, որոնցից շատերն ամփոփված են «Մեր խոսքը» խմբագրականների շարքում: Թերթը պնդում էր, որ այս պատերազմի հրծիզները միայն քեմալական շարժման կարկառուն

² «Ճակատամարտ» 1920, N 574:

³ Լույս տեղում:

⁴ Լույս տեղում:

⁵ Լույս տեղում:

դեմքերը չէին: Նրանք «միշտ կը վայելեն Պոլսոյ ամենաբարձր շրջանակներուն լոյն հասանութիւնը, ոչ Քէմալներն են ինքնագլուխ, ոչ ալ Խալիլները կամ Էնվերները»⁶: Այս դիտարկումը զուգորդում էր փաստերով, որոնք վկայում էին Թուրքիայի կողմից Մոտրոսի գինադադարի և միջազգային մի շարք համաձայնագրերի միակողմանի խախտումը⁷: Թերթը գրում էր, որ թուրքական այս պատերազմի սանձագերծման մեջ ուրույն դերակատարում ունեին բոլշևիկյան Ռուսաստանն ու Ադրբեջանի «կարմիրները»⁸: Լուրերից մեկի վերնագիրն այս առումով շատ խոսուն էր՝ «Երկու ճակատներու վրա. հայկական հաղթանակ թուրքերու և ռուսներու դեմ»⁹:

«Ճակատամարտի» դիտարկումներն ու վերլուծությունները պատերազմական գործողությունների կապակցությամբ

Ըստ պարբերականի վերլուծությունների՝ մի քանի ճակատով սկսված համաժամանակյա այս մարտական գործողություններով քեմալականներն ուզում էին 4 հիմնական խնդիր լուծել՝

- գրավել Կարսը, Արդահանը և Բաթումը,
- կապ հաստատել Ադրբեջանի հետ,
- հայթայթել պարեն և ռազմամթերք¹⁰
- կանխել դեպի Արևմտյան Հայաստան հայկական կողմի ենթադրյալ արշավանքը¹¹:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ «Ճակատամարտ» 1920, N 569:

¹⁰ «Ճակատամարտ» 1920, N 574:

¹¹ «Ճակատամարտ» 1920, N 576:

Թերթը, վկայակոչելով լրատվության սեփական աղբյուրները, գրում էր, թե Կարսը, Արդահանը և Բաթումը գրավելու որոշումը Մուստաֆա Քեմալն ընդունել էր դեռևս 1920 թվականի հունիսի 6-ին¹²: «Անցեալ տարի ամրան՝ ձախողեցաւ Սարրգամըշ-Կարսի դէմ կատարուած փորձը... Քեմալական իշխանութիւնը երբէք չիրաժարեցաւ այդ վտանգատուր ծրագրէն, շնորհիւ Մոսկուայի խրախոյսներուն, և հիմա նոր փորձ մըն է, որ կը կատարէ՝ առիթը յարմար նկատելով: Թուրք աղբիւրները կը հաւաստեն, որ այս անգամ շատ լաւ պատրաստուած ուժեր կան, եւ թէ Հայաստան չպիտի կրնայ տոկլաւ: Արդե՞ք»¹³, - գրում էր «Ճակատամարտը»:

Խմբագրակազմի կարծիքով՝ Հայաստանի Հանրապետությունն այս պատերազմում հաղթելու էր, թեև հաղթանակի հիմնական պատճառը համարում էր մեր բանակի հայրենասիրական ոգին, ինչը, սակայն, իրականում բավարար չէր թուրքական հարձակումներին դիմադրելու համար: «Ժողովուրդը վայրկեանին գիտակցութիւնն ունի եւ վճռած է մինչեւ վերջին մարդն ու փամփուշտը կռուիլ: «Դէպի Կարի՛ն», «Դէպի Սեւ ծով», «Մահ կամ վերջնական յաղթանակ»՝ ահա կարգախօսները»¹⁴, - տեղեկացնում էր «Ճակատամարտը»: Թերթը նշում էր, որ Հայաստանի կառավարությունը զորակոչ էր հայտարարել մինչև 35 տարեկանների համար և կարգավորել էր երկաթուղու երթևեկը¹⁵: Կամավորները նույնպես միանում էին զորքին¹⁶: Մինչև հոկտեմբերի 14-ը միայն Թիֆ-

¹² «Ճակատամարտ» 1920, N 573:

¹³ «Ճակատամարտ» 1920, N 573:

¹⁴ «Ճակատամարտ» 1920, N 583:

¹⁵ «Ճակատամարտ» 1920, N 576:

¹⁶ «Ճակատամարտ» 1920, N 576:

լիսում հավաքագրվել էին ավելի քան 30.000, իսկ Բաթումում՝ 5000 հայ կամավորներ¹⁷:

Միևնույն ժամանակ թերթը փաստում էր, որ Քեմալը միայն Սև ծովի առափնյա տարածքում գինվորագրել էր 7000 մուսուլմանի, որոնք միանալու էին Հայաստանի դեմ սկսված ռազմական գործողությունները ղեկավարող Քյազիմ Կարա Բեքիրի բանակին¹⁸: Հայ-թուրքական պատերազմում թուրքական զորախմբերին, պարբերականի հրապարակումների համաձայն, աջակցում էին Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները. «Մուսթաֆա Քեմալ ինք յայտնապես կը խոստովանի այդ պարագան, Չիչերինին ուղղած նամակով մը, որ կը հաստատէ համիլամական գորշ զանգուածին և ընկերային յեղափոխական կարմիր առաքելներուն սերտ գործակցութիւնը: Մոսկուան... ամեն աջակցութիւն կ'ընծայէ Թուրքիոյ «փրկիչ»ներուն, հրահանգներ կուտայ, դրամ և ռազմանիւթ կ'ուղարկէ»¹⁹: Թերթն, իբրև ասվածի ապացույց, տպագրել էր Քեմալ Աթաթուրքի վերոհիշյալ նամակը²⁰: Նախաբանում նշվում էր, թե այդ նամակը լույս էր սփռում ռուս-թուրքական համագործակցության անհայտ հանգամանքների վրա: Մասնավորապես՝ ասվում էր, որ սուտ էր թուրքերի և ռուսների կողմից տարածվող այն տեղեկությունը, ըստ որի՝ «Հայաստան Սովիեթական Ռուսիոյ միջնորդութիւնը մերժեր է վէճերը խաղաղօրէն լուծելու մասին»²¹: Սուտ էր համարում նաև այն, թե քեմալականներն ուզում էին

¹⁷ «Ճակատամարտ» 1920, N 583:

¹⁸ «Ճակատամարտ» 1920, N 580:

¹⁹ «Ճակատամարտ» 1920, N 584:

²⁰ **Նույն տեղում:**

²¹ **Նույն տեղում:**

գրավել Կարսի, Բաթումի և Արդահանի շրջանները՝ տեղի մուսուլման ազգաբնակչությանը հայերի կողմից «կոտորվելու» վտանգից փրկելու համար²²: Ֆրանսիական մամուլից թարգմանաբար արտատպված մեկ այլ վավերագիր փաստաթղթի միջոցով թերթը փաստում էր, որ Հայ-թուրքական պատերազմի բուն նպատակը «Պաքուի հետ յարաբերության ուղիղ գիծ մը ապահովելն» էր²³: Խմբագրակազմը եզրակացնում էր, որ այս պատերազմում Խորհրդային Ռուսաստանի և քեմալականների շահերը համընկնում էին՝ Հայաստանի Առաջին Հանրապետությունը վերացնելու նպատակն իրականացնելու համար: Վրաստանն էլ պահպանելու էր չեզոքություն և չէր օգնելու Հայաստանին: Թերթը պնդում էր, որ թուրքերի հետ տարված բանակցությունների հետևանքով էր ընդունվել այդ որոշումը վրացական իշխանությունների կողմից²⁴: Պարբերականը գրում էր, որ Հայաստանը միայնակ հայտնվել էր բավական բարդ պատերազմական իրավիճակում և սեփական ուժերով պետք է դիմադարձ կանգներ ռուս-թուրքական հարձակմանը. «Հայ զինուորին համար...հայրենիքը և անկախությունը սեփական ուժերով փրկելու այդ կա՛մքն է, որ ամեն բան կ'արժէ»²⁵:

«Ճակատամարտը» տպագրել էր Հայաստանի Հանրապետության վարչապետի, պատերազմական նախարարի, անվանի զորավարների և պետական այրերի կո-

²² **Նույն տեղում:**

²³ **Նույն տեղում:**

²⁴ **Նույն տեղում:**

²⁵ **Նույն տեղում:**

չերն՝ ուղղված հայ ժողովրդին²⁶: Դրանցով նրանք ոչ միայն ոգևորում էին պատերազմական անհավասար պայմաններում հայտնված հայրությանը, այլև տեղեկություններ էին հաղորդում հայկական զորքի մարտական հաջողությունների մասին: Օրինակ՝ Երևանի «Աշխատավոր» թերթից արտատպած վարչապետ Համո Օհանջանյանի խոսքից «Ճակատամարտի» ընթերցողները տեղեկանում էին, որ ռազմաճակատի առաջնագիծ էին մեկնել բոլոր նախարարները, իսկ պատերազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը վստահ հայտարարում էր. «Համոզուած ենք, որ պիտի կոտորենք մեր թշնամիները, որոնք պիտի հիասթափուին իրենց յոյսերուն մէջ: Վճռած ենք յաղթել եւ պիտի յաղթենք»²⁷:

Զորավար Սեպուհն էլ Կարսից էր դիմում հայ ժողովրդին՝ համատեղ ուժերով դիմադարձ կանգնել թշնամուն և գիտակցել պահի կարևորությունը²⁸: «Հայաստանի բանալին՝ Կարսը, վտանգի տակ է: Կոչ եմ անում, որ 18-40 տարեկանը աճապարէ գէնքով, մանգաղով, գերանդիով Կարսն ու Հայաստանը փրկելու: Եթէ տուհնք Կարսը, կուտանք Հայաստանը»²⁹, - նշված էր այդ կոչում:

«Ճակատամարտում» տպագրված էր նաև համայն հայրությանն ուղղված ամենայն հայոց Գևորգ 5-րդ կաթողիկոսի խոսքը³⁰: Հայրապետը ոգևորում էր ժողովրդը-

²⁶ Դրանցից շատերն արտատպություններ էին Հայաստանի Առաջին Հանրապետության թերթերից կամ լրագրող էին «Ճակատամարտի» ստացած հեռագրերից. - Մ.Հ.:

²⁷ «Ճակատամարտ» 1920, N 583:

²⁸ **Նույն տեղում:**

²⁹ **Նույն տեղում:**

³⁰ «Ճակատամարտ» 1920, N 584:

դին անցյալի հայ քաջերի օրինակներով: Նա մասնավորապես ասում էր. «Եթէ թեզ համար թանկ է հայրենիքը, եթէ դու սիրում ես ազատ ապրել, եթէ թեզ համար նուիրական և սուրբ է հայի անունը, պատիւը, հայրերիդ ու պապերիդ արինով ներկուած եկեղեցին, ընտանեկան սրբութիւնը և օջախը, ապա ժամանակն է, որ դու զէնքը ձեռքիդ պաշտպան հանդիսանաս վտանգուած հայրենիքի»³¹: Պարբերականի էջերում այն օրերին Հայաստանում տիրող մթնոլորտի մասին պատկերացում էր տալիս անվանի դերասան Հ. Աբեյյանը, որն իր դերասանական խմբով հյուրախաղերի էր ժամանել Կ. Պոլիս³²: Նա ասում էր, որ մեծ էր մեր ժողովրդի ոչ միայն հայրենիքը կյանքի գնով պաշտպանելու ցանկությունը, այլև վրեժի ծարավը թուրքերի հանդեպ³³: «Այնքան շատ են արծանագրուող և ճակատ մեկնող կամատրները, որ ստիպուած են ընտրութիւններ ընել: Թիֆլիսի մէջ երիտասարդները բոլորն ալ միայն մէկ կարգախօս ունին՝ կամատր և դէպի՝ ճակատ: Ամբողջ ուսանողները մեկնած են Հայաստան: Միեւնոյն խանդավառութիւնը և զոհաբերութեան ոգին կը տիրէ Հայաստանի բոլոր գաառներուն մէջ: Դասալիքները կը քարկոծուին նոյն իսկ կիներուն կողմէ»³⁴, - վկայում էր տաղանդավոր դերասանը: Նա նաև նշում էր, որ քեմալական զորքի անակնկալ հարձակումից ուշքի եկած հայկական ուժերը կարողացել էին կասեցնել թշնամու առաջխաղացումը: Աբեյյանը հայ զինվորներին համեմատում էր երկաթե պատնեջի հետ,

³¹ **Նոյն տեղում:**

³² «Ճակատամարտ» 1920, N 583:

³³ **Նոյն տեղում:**

³⁴ **Նոյն տեղում:**

որը ետ էր մղում հակառակորդի հարձակումները³⁵:

«Ճակատամարտը» գրում էր, որ Հայաստանում և հայկական գաղթավայրերում մեկ նշանաբան էր միավորում ողջ հայությանը՝ «Ամեն ինչ ճակատի համար»³⁶: Համահայկական այդ նպատակի համար էին գործում Թիֆլիսում և Բաթումում հիմնված Հայաստանի փրկության կոմիտեները, որոնց գործունեությունը հանգամանորեն լուսաբանվում էր թերթի էջերում: Օրինակ՝ տպագրվել էր Թիֆլիսի այդ կառույցի կոչը³⁷: «Հայրենիքը վտանգի մեջ է... Կարգը եկած է քաղաքացիներուն, որոնցմէ ոչ մէկը չպիտի խուսափի իր նիւթական միջոցները հայրենիքի պաշտպանութեան գործին տրամադրելէ: Վայրկեանը լուրջ է և հրամայողական: Ամենքը դէպի ճակատ: Ով որ հայրենիքի հետ չէ, հայրենիքի դէմ է»³⁸, - մասնավորապես սա էր գրված այդ կոչում: Թիֆլիսի՝ Հայրենիքի փրկության կոմիտեն առաջարկում էր տեղաբնակ բոլոր հայերին կոնկրետ նշված ժամկետներում (մինչև հոկտեմբերի 12-ը - Մ. Հ.) միանալ հանուն Հայաստանի փրկության սկսված հանգանակությանը, եթե չէին ուզում համարվել հայրենիքի դավաճան³⁹:

«Ճակատամարտ» օրաթերթի անդրադարձը Հայ-թուրքական պատերազմին

Թերթը «Հայ և թուրք պատերազմին ընթացքը» խորագրի ներքո ամենօրյա կտրվածքով անդրադառնում էր Հայ-թուրքական պատերազմի ընթացքին, կարևոր դրվագներին և ճակատամարտերին, բանակցություն-

³⁵ **Նույն տեղում:**

³⁶ «Ճակատամարտ» 1920, N 584:

³⁷ **Նույն տեղում:**

³⁸ **Նույն տեղում:**

³⁹ **Նույն տեղում:**

ներին: Հատկապես Կարսի համար մղվող մարտերն էին գտնվում «Ճակատամարտի» ուշադրության կենտրոնում: Խմբագրակազմը դրանք ներկայացնում էր՝ արտատպումներ կատարելով հայաստանյան և թիֆլիսահայ մամուլի օրգաններից, ինչպես նաև այդ օրերին Հայաստանից Կ.Պոլիս ժամանող մտավորականներից ու զինվորականներից: Պարբերականը շարունակում էր պահպանել լավատեսությունը հայկական ուժերի համախմբման և հաղթանակի հասնելու առումով, թեև այդ ամենի համար չկային օբյեկտիվ նախադրյալներ: Բերենք մեկ օրինակ Թիֆլիսի «Աշխատավոր» թերթից արտատպված հոդվածից⁴⁰: «Կարսն ընկնում է... Չկայ տրտունջ, այլ՝ վճռականություն, չկայ սարսափ, այլ՝ ոգեւորություն: Պաշտպանել ազատութիւնը, ետ քշել թշնամուն. - ահա ամենքի կամքը... Հայ զօրքերն անցան յառաջխաղացութեան և կռուի նախաձեռնութիւնը ձեռք առին»⁴¹, - ահա այսպես լավատեսորեն էր ավարտվում թղթակցությունը: Նույն չարդարացված ու չհիմնավորված լավատեսությունը կար թերթում տպագրված Հայաստանի կառավարության զեկույցում, որտեղ շարադրված էին քեմալականների հետ Կարսի անկումից հետո կնքված զինադադարի մանրամասները⁴²: «Այս բանակցութիւնները բարեյաջող ելք ունեցան»⁴³ նախադատությունն ամեն ինչ ստում է թե՛ խմբագրակազմի, թե՛ Հայաստանի կառավարության դիվանագիտական ունա-

⁴⁰ «Ճակատամարտ» 1920, N 607:

⁴¹ **Նույն տեղում:**

⁴² **Նույն տեղում:**

⁴³ **Նույն տեղում:**

կությունների ու դիվանագիտական գիտելիքների մակարդակի մասին:

Թերթում չկա Հայաստանի կառավարության վարած քաղաքականության մասին որևէ բացասական գնահատական անգամ երկրի համար այդ ճակատագրական պահին, երբ Հայ-թուրքական պատերազմն ավարտվեց քեմալականների հաղթանակով: Իհարկե, դա առաջին հերթին պայմանավորված էր այն հանգամանքով, որ թերթը քաջ գիտակցում էր տվյալ ժամանակաշրջանում հայկական պետականությանը սպառնացող օրյեկտիվ և անբարենպաստ աշխարհաքաղաքական պայմանները, ռուս-թուրքական փոխշահավետ համագործակցության վտանգները, Անտանտի պետությունների և Միացյալ Նահանգների երկդիմի ու ձեռքերը վանալու քաղաքականությունը, միայնակ մնացած Հայաստանի Հանրապետության հուսահատ պայքարի ու գոյատևման անպտուղ ջանքերը: Թերթը նաև հասկանում էր, որ այդ իրավիճակում որևէ դրական արդյունք չէր տալու կառավարության կոչը. «Քաղաքացիներ՝, փորձութեան այս սարսափելի ժամուն մոռցէք ձեր բոլոր անձնական գործերը, ամբողջ ընտանիքով նուիրուեցէք հայրենիքի պաշտպանութեան: Կոչիւր ժողովրդական պէտք է ըլլայ: Իրաքանչիւր հայ պէտք է ոտքի կանգնի Հայաստանի պաշտպանութեան համար: Մա՛հ կամ ազատութիւն. - ահա այս է օրուան նշանաբանը»⁴⁴:

1920 թվականի հոկտեմբերի սկզբին թերթը կարծում էր, որ քեմալականները, նույնիսկ Ռուսաստանի օգնությամբ, չէին կարողանալու հաղթել Հայաստանին, որը շատ շուտով իրեն էր կցելու Թուրքիայի արևելյան

⁴⁴ **Նոյն տեղում:**

նահանգները՝ Արևմտյան Հայաստանը⁴⁵: «Այլևս չկա ուժ մը, որ կարենայ իրենց իշխանութիւնը վերահաստատել այնտեղ: Ուշ կամ կանուխ պիտի կատարուի ինչ որ անդառնայի է, ինչ որ վճռուած ու ստորագրուած է... Մոսկուայի վրայ դրուած յոյսերը խախտու են⁴⁶... Կ'ըսեն, թէ հաշտութեան հիմը պիտի ըլլայ Սէվրի դաշնագրին ճանաչումը: Ուրեմն քեմալականները անձնատուր պիտի ըլլան... Թուրքիոյ փրկութիւնը Արաքսի ափերէն չէ, որ պիտի գայ...»⁴⁷, - գրում էր պարբերականը: Իրադարձությունները, սակայն ի վնաս հայկական պետության լուծեցին Հայ-թուրքական պատերազմի ելքը:

Եզրակացություններ

Ամփոփելով՝ կարող ենք փաստել հետևյալը:

- «Ճակատամարտի» էջերում ոչ միայն ամփոփված է Հայ-թուրքական պատերազմի ողջ ընթացքը, այլև հատկապես կարևոր փաստաթղթերի տպագրության միջոցով ներկայացված են դրա ծագման ու Հայաստանի կրած պարտության պատճառները և ծանր հետևանքները, ի թիվս որոնց՝ հողատարածքների կորուստն ու երկրի անկախության վերացումը:
- Թերթի հրապարակումներն աչքի են ընկնում իրենց հրատապությամբ, օբյեկտիվ վերլուծությամբ և անաչառությամբ:
- Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ պարբերականը լույս էր տեսնում Թուրքիայի մայրաքաղաքում, բայց չէր վախենում իր հողվածներում ներ-

⁴⁵ «Ճակատամարտ» 1920, N 569:

⁴⁶ **Նոյն տեղում:**

⁴⁷ «Ճակատամարտ» 1920, N 572:

կայացնել ճշմարտությունը այդ պատերազմը սանձագերծող կողմի նկրտումների և հայ ժողովրդի հայրենիքի բռնագրավման, տեղաբնակ հայության ցեղասպանության հաշվին թուրքական պետություն հիմնելու մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- «Ճակատամարտ» 1920, Կ.Պոլիս, N 569 («Երկու ճակատներու վրա. հայկական հարթանակ թուրքերու և ռուսներու դեմ»), («Ի՞նչ է իմաստը այս խաղերուն»):
- «Ճակատամարտ» 1920, N 572 («Շոյելով պիտի նվաճեն»):
- «Ճակատամարտ» 1920, N 573 («Հունիս 6-ի հրամանը»):
- «Ճակատամարտ» 1920, N 574 («Քեմալական գործողությունները Հայաստանի դեմ»), («Թուրք հարձակողականը»):
- «Ճակատամարտ» 1920, N 576 («Կոիվները կշարունակվին»):
- «Ճակատամարտ» 1920, N 580 («Մուստաֆա Քեմալ կզինվորագրե բոլորը»):
- «Ճակատամարտ» 1920, N 583 («Մահ կամ վերջնական հաղթանակ»), («Կամավորական շարժումը խոշոր համեմատություններ կառնե»), («ՀՀ վարչապետին և պատեր. նախարարին հայտարարությունները»), («Ձոր. Սեպուհի կոչը»), («Թուրք հորդաներուն դիմաց երկաթե պատենշ մը»):
- «Ճակատամարտ» 1920, N 584 («Ամեն ինչ ճակատի համար»), («Մուստաֆա Քեմալի նամակը Չիչերինին»), («Ինչպես որոշվեցավ հարձակողականը Հայաստանի դեմ»), («Կաթողիկոսին կոչը»), («Հայաստանի փրկության կոմիտեին կոչը»):
- «Ճակատամարտ» 1920, N 607 («Ի՛նչպես ինկավ Կարսը»), («Ձեկուց հայկական կառավարության. զինադադարը

ինչպես կնքվեցավ»), («Հայկ. կառավարության կոչը ժողովրդին. մահ կամ ազատություն»):

Մարիամ Հովսեփյան, ք.գ.թ.,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
Հայ պարբերական մամուլի և հասարակական
մտքի պատմության բաժին, առաջարար գիտաշխատող
mariamhovsepiyan@mail.ru

ARMENIAN-TURKISH WAR ON THE PAGES OF “CHAKATAMART” (1920)

Keywords: *conflict, Armenian-Turkish war, hostility, defeat, negotiations, peace treaty, objective analyses.*

The daily newspaper “Chakatamart” not only summarized the entire process of Armenian-Turkish war, but also represented the causes and consequences of its origin and the defeat of Armenia. “Chakatamart” daily newspaper also represented analytical articles that are distinguished by their relevance, objective analysis and impartiality.

Mariam Hovsepyan - Ph.D
Institute of History of NAS RA,
Department of Armenian Periodicals and Public Mind,
Leading Researcher,
mariamhovsepiyan@mail.ru